



Համո ՍԱՐՅԱՆ

## Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ

Ախր ուրիշ տեղ սեփական մոխրում  
Սեփական հոգին խորովել չկա,  
Ախր ուրիշ տեղ  
Սեփական բախտից խռովել չկա:

Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ,  
Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ:

Ախր ուրիշ տեղ հայրեններ չկան,  
Ախր ուրիշ տեղ հորովել չկա,

Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ,  
Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ:

Ախր ուրիշ տեղ  
Հողի մեջ այսքան օրհնություն չկա,

Այսքան վաստակած հոգնություն չկա:  
Ախր ուրիշ տեղ ծյունի մեջ՝ արև,  
Եվ արևի մեջ այսքան ծյուն չկա:  
Ախր ուրիշ տեղ տեղահան եղած,  
Եկած ուսերով Արագած սարի  
Ուսերին հենված Սասնա տուն չկա:  
Ախր ուրիշ տեղ  
Ամեն մի քարից, առվից, ակոսից  
Իմ աչքերով իմ աչքերին նայող  
Մանկություն չկա...

Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ,  
Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ,  
Ախր ես ինչպե՞ս ապրեմ առանց ինձ:

## ՀԱՅԱՍՏԱՆԵՐ ՄԻ՝ ԼՔԵՔ, ՀԱՅԵՐ

Իմաստուն հայի, ճշմարիտ սյունեցու, ակամավոր բանաստեղծ Համո Սահյանի «Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ» բանաստեղծությունն այսօր պատահաբար չի հայտնվել մեր թերթի 1-ին էջում: Այն պիտի այսօր կարդալ ու կարդալ՝ հասկանալու, գիտակցելու, թե ինչու չի կարելի լքել ու հեռանալ մեր միակ ու թանկ հայրենիքից, հազարամյակների երազած Հայաստան երկրից:

Այս անհանգստության պատճառը համառորեն տարածվող ու ծավալվող այն լուրերն են, որ շատ-շատ հայաստանցիներ սպասում են ճանապարհների բացվելուն, որ ընտանիքով թողնեն ու հեռանան մեր երկրից: Հատ-շատերին կարելի է հասկանալ. ունենք դավաճաբար պարտված, Արցախը կորցրած, մեր ազգային արժանապատվությունն ու հպարտությունը ոտնահարված և աղետի մատնված երկիր և կոտորված Սփյուռք:

Բնական է, որ երկրից հեռանալու են կարող, բանիմաց, ստեղծող և արարող հայերը: Պողոսները, տգետ, անուղեղ, Նիկոլ վարչապետին Աստված հռչակող մանկությունը չեն գնալու, որովհետև նրանք ոչ մի երկրում պետք չեն: Նրանք պարզապես աղք են ու ծանր հոգս ցանկացած երկրի համար: Նրանք պետք են միայն վարչապետ Փաշինյանին, որը նրանց ամեն օր կերակրում է ստերով, հարստանալու հույսերով ու խոստումներով:

Այսօր քարուքանդ եղած հայրենիքը, գիտակից հայեր, ձեր անփոխարինելի կարիքն ունի, և դուք իրավունք չունեք այս աղետալի վիճակում հայտնված երկիրը թողնել ու հեռանալ, և բոլորիս պարտքն է համախմբվել և միասնաբար ստիպել, որ երկիրն այս աղետալի վիճակին հասցրած վարչապետն ու իր նվիրյալ աջակիցներն արագ թողնեն իշխանությունը, որովհետև ամեն մի օր նոր պատուհասներ է սպառնում մեր երկրին ու ժողովրդին: Նրանք պիտի հեռանան, որպեսզի ազգովին կարողանանք ամրացնել մեր երկիրը, վերականգնել մեր բանակի հաղթանակած ոգին, վերականգնել փլուզված տնտեսությունը, մեր ոչնչացվող բարոյական արժեքները, փրկել հայի ինքնությանը սպառնացող վտանգները՝ մեր հավատը, մեր եկեղեցին, մեր լեզուն, մեր պատմությունը, մեր փառապանծ գիտությունը, մեր համալսարաններն ու ինստիտուտները խառնճիկներ դարձնելու փորձերը:

Մի պահ հե՛տ նայեք, սիրելի՛ հայեր, թե մեր հպարտ, արժանապատիվ, միջազգային ճանաչում ու հարգանք ունեցած Հայաստանը ինչպես է անվանարկվել, ինչ ճգնաժամում է հայտնվել՝ պարտված, ստորացված, օրօրի հայրենի երկիրը թշնամուն գիջող կամ հանձնող իշխանության ջանքերով:

Այս աղետալի վիճակից դուրս գալու, Հայաստանը նորից արժանապատիվ և հաղթանակած ու հզոր հայրենիք դարձնելու համար պետք է յուրաքանչյուր հայ (չհաշված պողոսները և փաշինյանական աղանդավոր մանկուղիները) իր սրբազան պարտքը համարի հետ բերելու, վերականգնելու մեր կորցրածը և գործադրի բոլոր իմացություններն ու ջանքերը: Եվ թող անիծյալ լինի այն հայկական «որտեղ հաց, էնտեղ կաց» ասացվածքը, որ հարիր չէ մեր ժողովրդին: Եվ ամեն մի հայ, որ պատրաստվում է լքել հայրենիքը, թող լավ մտածի դրա անդամալի հետևանքների մասին:

Նախ՝ դուք դառնում եք անհայրենիք, ձեր երեխաները, ձեր թոռները մոռանալու են մայրենին և դադարեն հայ լինելուց: Մի՞թե սա ազգային աղետ չէ, սիրելի՛ հայեր:

Դուք պիտի չլքեք Հայաստանը՝ ի հեճուկս թուրքերի և ինչու չէ, նաև Նիկոլ Փաշինյանի: Չէ՞ որ արդեն բացահայտ է, որ նա նպատակադրված կործանում է մեր պետությունը, ազգայինը, հաղթանակած մեր բանակը, ամեն-ամեն հայկականն ու սրբությունը: Այլապես մենք չէինք ունենա նման խայտառակ պարտություն, Արցախ աշխարհի կորուստ, տասնյակ հազարավոր զոհեր ու վիրավորներ:

Մեր երիտասարդության ծաղիկը թուրքին մատաղ արած վարչապետը դեռ կարողանում է ամանորյա ուղեծրում կոչ անել այսուհետ 3-4 երեխա ունենալու մասին: Իսկ նա մտածե՛լ է, թե տասնյակ հազարավոր աղջիկներ ունենալով պիտի ամուսնանան, մայրանան: Չէ՞ որ նրանք բաժին տղաներն այլևս չկան:

Սիրելի՛ հայեր, մի՛ լքեք Հայաստանը: Մի՛ նեղվեք, մի քիչ վատ ապրեք, բայց մնացե՛ք, որ ազգովի փրկենք մեր երկիրը փաշինյանական աղետից:

Հունվարի 11-ին Նիկոլ Փաշինյանը մեկնեց Մոսկվա, ինչպես ինքը հայտարարեց՝ լուծելու մեր հայրուրավոր գերիների, անհայտ կորածների հարցը: Եվ, ինչպես միշտ, ստեղծեց: Գերիների հարցը չբնարկվեց: Դրա փոխարեն վարչապետը ստորագրեց Մեղրու միջանցքը թշնա-



մուն հանձնելու փաստաթուղթը, որով իրականացավ անիծյալ թուրքի հայրուրանյա երազը: Իսկ իր անփոփիչ խոսքում էլ գոհունակությամբ հայտարարեց, որ այդ հարցի լուծումը նպաստելու է Հայաստանի տնտեսական զարգացմանը, միլիարդավոր մեթոդներ կբերի Հայաստան:


Նիկոլ Փաշինյանն անթաքույց վարում է թուրքամետ քաղաքականություն: Եվ՛ պատերազմից առաջ, և՛ ընթացքում նա ամեն ինչ արեց, որ Հայաստանը պարտվի: Դրա համար նա նույնիսկ հատուկ հանձնարարությամբ Արցախ էր գործուղել կամանգ «Էրատո» հատուկ ջոկատը՝ Աննա Հակոբյանի գլխավորությամբ, այն Աննայի, ով Արցախյան պատերազմում զոհված հերոսներին կոչում էր «զոհեր առ ոչինչ»: Նա գուցե թե իր այս թևավոր խոսքը հաստատելու համար ուղիղ մեկ ամիս նստեց գլխավոր շտաբում և ղեկավարում էր «առ ոչինչ» ծրագիրը:

Անմար մնա հայրենիքի համար իրենց կյանքը զոհաբերած հազարավոր հերոս հայորդիների, մեր երիտասարդության ծաղիկ սուրբ հիշատակը: Միփաթուղթում և համբերություն որդեկորույս մայրերին, հայրերին, հարազատներին: Մենք դեռ կլուծենք նրանց վրեժը:

Ավարտենք: Ներողություն են խնդրում միտքս կրկնելու համար, սակայն այսօր՝ աղետի պահին, հայրենիքն ու հայրական տունը լքելու գաղափարը սխալ է: Թանկագին հայեր, պետք է մնաք և ձեր ջանքերը, կամքը, ողջ կարողությունը գործի դնեք մեր սուրբ հայրենիքը «թուրքական վիլայեթ» վերածելու Նիկոլ Փաշինյանի և «Էրատո» ջոկատի հրամանատար Աննա Հակոբյանի թուրքամետ երազանքը:

Ա. ԶԱՋԵՐՈՒՆԻ

# ՆՈՒՅԵԼՅԱՆ ՄՐՑԱՆԱԿ - 2020



Ռայնհարդ Յենցել



Անդրեա Գեզ



Ռոդեր Փենտրոուզ

Ֆիզիկայի բնագավառում Նոբելյան մրցանակը շնորհվել է անգլիացի ֆիզիկոս Ռոդեր Փենտրոուզին, գերմանացի աստղաֆիզիկոս Ռայնհարդ Յենցելին և ամերիկացի աստղագետ Անդրեա Գեզին՝ սև խողովների ուսումնասիրության համար:




Ջենիֆեր Դուդնա



Էմանուել Շարպանտին

Քիմիայի բնագավառում Նոբելյան մրցանակի դափնեկիրներ են դարձել Էմանուել Շարպանտին (Մաքս Պլանկի ընկերության Վարակային կենսաբանության ինստիտուտ) և Ջենիֆեր Դուդնան (Կալիֆոռնիայի Բերքլիի համալսարան)՝ «համագեների խմբագրման մեթոդի զարգացման համար»: 51-ամյա Շարպանտին և 56-ամյա Դուդնան քիմիայի Նոբելյան մրցանակի 6-րդ և 7-րդ կին դափնեկիրներն են դրա պատմության ողջ ընթացքում:



Ջարվի Ալթեր



Մայքլ Ջուրթոն




Չառլզ Ռայս

Ֆիզիոլոգիայի և բժշկության ոլորտում Նոբելյան մրցանակը շնորհվել է բրիտանացի գիտնականներ Մայքլ Ջուրթոնին, Ջարվի Ալթերին և Չառլզ Ռայսին՝ հեպատո C վիրուսի վերաբերյալ հետազոտությունների համար:

Տնտեսագիտության բնագավառում Նոբելյան մրցանակի դափնեկիրներ են դարձել ամերիկացիներ Փոլ Միլգրոմը և Ռոբերտ Ուիլսոնը՝ աճուրդների տեսությունը կատարելագործելու և աճուրդների նոր ձևաչափեր հայտնագործելու համար:



Փոլ Միլգրոմ



Ռոբերտ Ուիլսոն



Լուիզ Գլյուկ

Գրականության բնագավառում Նոբելյան մրցանակի դափնեկիր է դարձել Լուիզ Գլյուկը՝ «իր պոետիկ ծայնի, անհատականը համընդհանուրի վերածելու, իր կոշտ գեղեցկության համար»:



## World Food Programme

wfp.org

Խաղաղության Նոբելյան մրցանակը շնորհվել է ՄԱԿ-ի Պարենային համաշխարհային ծրագրին՝ սովի դեմ ջանքեր գործադրելու համար:



## Ռոբերտ Ղազարյանն ընտրվեց ԸՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրենի պաշտոնում

Սույն թվականի դեկտեմբերի 23-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստում ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրենի պաշտոնում միաձայն ընտրվեց Ռոբերտ Ղազարյանը:

Ռոբերտ Ղազարյանը ծնվել է 1976 թ. Երևանում: 2001 թ. ավարտել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմաաշխարհագրական ֆակուլտետը, 2005 թ.-ին ստացել է պատմական գիտությունների թեկնածուի աստիճան: Ռոբերտ Ղազարյանի հետազոտությունների ոլորտն ընդգրկում է Հին Արևելքի պատմությունը, Հայոց պատմության հին շրջանը, Հայկական լեռնաշխարհի և Փոքր Ասիայի պատմության միջին և ուշ բրոնզեդարյան ժամանակաշրջանը: Նա 4 գրքի և 31 հոդվածի հեղինակ է:

Ռոբերտ Ղազարյանը 2005 թ.-ից աշխատում է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում: 2013-2020 թթ. եղել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտական գծով փոխտնօրենը, 2020 թ. սեպտեմբերի 15-ից՝ ինստիտուտի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարը:

Ռոբերտ Ղազարյանը ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի Արևելագիտության ամբիոնի վարիչն է 2008 թ.-ից: 2015 թ.-ից առ այսօր նա ՀՀ ԳԱԱ «Հիմնարար հայագիտություն» էլեկտրոնային անգլալեզու պարբերականի պատասխանատու քարտուղարն է, 2014 թ.-ից՝ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» ժողովածուի գլխավոր խմբագրի տեղակալը:

Ռոբերտ Ղազարյանը Հայաստանի պատմաբանների ասոցիացիայի անդամ է: 2011-2015 թթ. եղել է ԲՈԿ-ի 006 Համաշխարհային պատմություն մասնագիտական խորհրդի անդամ, «Մերձավոր Արևելք», «Հին Արևելք», «Արևելագիտությունը Հայաստանում» ժողովածուների խմբագրական խորհուրդների անդամ:

**ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն**



## ԸՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի տնօրենի պաշտոնում ընտրվեց Արմեն Սարգսյանը

Սույն թվականի դեկտեմբերի 23-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստում ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի տնօրենի պաշտոնում միաձայն ընտրվեց տնտեսագիտության թեկնածու

Արմեն Սարգսյանը:


Արմեն Սարգսյանը ծնվել է 1986 թ.: 2008 թ. ավարտել է Հայաստանի պետական տնտեսագիտության համալսարանը: 2011 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի աստիճան:

Սովորել է ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնում՝ դառնալով իրավագիտության մագիստրոս:

Իր աշխատանքային ուղին Արմեն Սարգսյանն անցել է ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնում՝ լինելով համակարգչային լաբորատորիայի ղեկավար, ցանցային ադմինիստրատոր, ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի ուսումնական մասի պետի տեղակալ, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ: 2020 թ. հոկտեմբերից Արմեն Սարգսյանը ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի տնօրենի պաշտոնակատարն է:

**ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն**





ԱՆԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

## ԱՄԵՆԱՎՈՐ ՊԱՏՄԱՐԱՔԱՆԻ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ՀԱՏՈՐԻ ԿԻՐԱՌ-ԱՄԸՆ ԱՐԺԵ-ՔԸ

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը օրերս հայ մտավորականների սեղանին է դրել ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տաղանդավոր արևելագետ ու դիվանագետ Նիկոլայ Յովհաննիսյանի «Հայոց պատմության անընդմեջ շղթան դարերի խորքից մինչև XXI դարի սկիզբ» կոթողային աշխատությունը։ Այն, ինչպես մեծ հայրենասեր Ներսես Շնորհալիկն կասեր, ուղղված է Հայաստանի քաղաքական գործիչներին՝ անցյալի, ներկայի ու ապագայի։

Եթե որևէ հայ իր կոչումն է տեսնում քաղաքականությամբ զբաղվելու հոգևոր Հայաստանի, թող կարդա այս գիրքն ու դասեր քաղի դրանից։

Հայ ժողովրդի ամբողջական պատմությունը շարադրելը խիստ պատասխանատու է։ այդ գիտակցումն ունեցել է ոսկեդարում մեր Պատմահայրը՝ Մովսես Խորենացին, որի «Հայոց պատմության» պատգամներն ուղենշային են։ Ն. Յովհաննիսյանը գրքի սկզբում դրված «Երկու խոսք» հատվածում գրում է. «Հանրահայտ ճշմարտություն է, որ աշխարհը մի բան էր մինչև Հիսուս Քրիստոսի հայտնվելը, բոլորովին այլ բան քրիստոնեության հայտնվելուց հետո» (էջ 3)։

Քրիստոնեությունն առաջինը պետական կրոն հռչակած Հայաստանը պետք է իմանա այն դժվարին ուղու հիմնական դրվագները, որոնք նրան հասցրել են XXI դար՝ իր պետականությամբ, զինանշանով, օրհներգով, Գիտությունների ազգային ակադեմիայով, ազգային բանակով, բուհերով, բարձր արվեստով, գրականությամբ, հոյակապ ճարտարապետությամբ և ամեն մի ազգի պատիվ բերող նվաճումներով։

«Հայոց պատմության» նորոյա տարբերակի հեղինակ Նիկոլայ Յովհաննիսյանը 100 մենագրությունների, 485 գիտական հոդվածների հեղինակ է, որոնք տարբեր լեզուներով հրատարակվել են աշխարհի 25 երկրներում։ Նրա բոլոր գրքերն ու հոդվածները գրված են խոր գիտելիքների ու ստուգված փաստերի հիման վրա, որին, ի-

հարկե, օգնել են տարբեր լեզուների իմացությունը ու օտար աղբյուրների հետազոտումն։ Պատմաբանի եզրահանգումը մեկն է. «Հայը, ինչպես վկայում է պատմությունը, պետութենաստեղծ ազգ է»։ Հազար անգամ իրավացի է պատմաբանը, երբ Տիգրան Մեծի կայսրության օրինակով հիշեցնում է հայերի գեներտիկ հնարավորությունները, և պետք է «մշտապես հայերին ներարկեն, ներշնչեն և թույլ չտան մոռացության մատնել հաղթանակի և հզորության բարձրակետ հանդիսացող այդ վսեմ պարագան, մշտապես հպարտանալ պատմական այդ բացառիկությամբ» (էջ 9)։

Ոչ մի պետություն չի կարող գոյություն ունենալ, եթե այն չունի ներքին ու արտաքին իմաստուն քաղաքականություն, նրան մվիրյալ ու գործունյա, բանիմաց ղեկավար։ Ամեն պետության համար կարևոր է միջազգային գործունը։ Ամիրաթեշտ է այլ պետությունների լավագույն օրինակներն ուղեցույց ունենալ։ Պատմաբանը շատ տե-

վան, Մուշ, Բիթլիս, հայկական ճանաչելու օգտին, և դրան արգելք են դարձել Ստալինն ու Լենինը (էջ 75)։

Գրքում ներկայացվում է, թե ինչ գործառույթներ է ունեցել Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետությունը, որի կազմ են մտել Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը։ Այն լուծարվել է 1936-ին, և վերոնշյալ հանրապետությունները մտել են նորաստեղծ ԽՍՀՄ-ի կազմ։

Քանի որ Խորհրդային Հայաստանը մտնում էր Խորհրդային Միության կազմի մեջ, ապա 1945 թ. հուլիս-օգոստոսին Գերմանիայի Պոտսդամ քաղաքում տեղի ունեցած կոնֆերանսի ժամանակ հաղթանակած երկրները՝ ԽՍՀՄ-ը, ԱՄՆ-ը և Անգլիան, քննարկել են նաև Հայկական հարցը. «Պոտսդամի կոնֆերանսը եղավ վերջին կոնֆերանսը, որտեղ Խորհրդային Միության նախաձեռնությամբ քննարկվեց թուրքիայի կողմից 1921 թ. հայկական գրավյալ

տարածքները Հայաստանին վերադարձնելու հարցը» (էջ 84)։

Գրքի մեծ մասը վերաբերում է մեր օրերին։ Այն երրորդ մասն է և կոչվում է «Խորհրդային Միության փլուզումը և Հայաստանի անկախության վերականգնումը» (էջ 90-419)։ Ամերիկացի պատմաբան Ֆուկույաման համոզված հայտարարել է, որ դա ԽՍՀՄ-ի պատմության ավարտն է՝ «The End of History» (էջ 90)։ Բնականաբար ներկայացվում է, թե ինչպես է ընդունվել «Հայաստանի անկախության հռչակագիրը»։

Գրքի երրորդ հատվածում Ն. Յովհաննիսյանը համոզել է զալիս արդեն որպես Հայաստանի քաղաքական կյանքի գործուն մասնակից՝ ի շահ հայ ժողովրդի պատմական ու ազգային շահերի։

Գրքում կան բազմաթիվ պետական փաստաթղթեր, որոնց հեղինակը ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի մեծօրեն Նիկոլայ Յովհաննիսյանն է։ Այդ փաստաթղթերն ուղղված են տարբեր երկրների պետական կարևոր անձերի, ինչպես նաև ՀՀ նախագահներ Լևոն Տեր-Պետրոսյանին ու Ռոբերտ Քոչարյանին։

Գրքից պարզ է դառնում, թե որքան կարևոր դեր է կատարել պատմաբան Նիկոլայ Յովհաննիսյանը Հայոց ցեղասպանությունը միջազգայնորեն ճանաչելու խնդրում։ Իմանում ենք, թե աշխարհի որ երկրներն են ճանաչել թուրքիայի կողմից կազմակերպված աշխարհում առաջին ցեղասպանությունը՝ ժամանակագրական թվարկումով։ Որքան էլ որ զարմանալի է (չէ՞ որ այսօրվա Երդողանի թուրքիան ցեղասպանությունը ժխտում է), առաջինը ճանաչել է՝ «Օսմանյան կայսրություն-1919 թ, սուլթան Մեհմեդ Վահիդեդին VI-ի հրամանով ստեղծված լեզիտիմ արտադրող ատլանտիկ ղազախների վերդիկտով» (էջ 373)։ Նրանից հետո առաջին պետությունն աշխարհում, որ ճանաչել է ցեղասպանությունը, Ուրուգվայն է։

Ն. Յովհաննիսյանի «The Armenian Genocide, Armenocide» գիրքը լույս է տե-

սել Երևանում 2002-ին, «Ձանգակ» հրատարակչության կողմից։ Սա մի հզոր փաստաթուղթ է՝ զուսպ, ազդու, փաստացի, գիտական, արժանապատիվ։ Այս գրքում էլ կան փաստաթղթեր, որոնք ներկայացնում են գիտնականի ջանքերը՝ հայ դատի ճշգրիտ պահանջը ներկայացնող։

Ն. Յովհաննիսյանն իր գործունեությամբ մասնակից է Արցախյան խնդրի արդարացի լուծման, որով համոզել է եկել միջազգային տարբեր լսարաններում։ Աշխարհի կարևոր քաղաքական դեմքերի հետ նրա հանդիպումների վավերաթղթերը ներկայացված են այս գրքի երրորդ մասում։

Գրքի որոշ հատվածներ վերածվում են գեղարվեստական պատումի, չնայած հիմքում ընկած է վավերականը։ «Վազգեն Առաջին կաթողիկոսը և Մայր Թերեզան» (էջ 149-161) դրանցից մեկն է։ Յովհաննիսյանը 1955-ին, որպես լայն հետաքրքրություններ ունեցող պատմաբան, ներկա է եղել Վազգեն Առաջին Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրվելու իրադարձությանը՝ նախապես իմանալով, որ «...նա շատ խելոք, կրթված, մեծ գիտելիքների տեր անձնավորություն է, նույնիսկ գիտնական, որը տիրապետում է բազմաթիվ լեզուների։ Խոսում էին նրա բարի լինելու և անձնական հմայքի մասին» (էջ 149)։ Մայր Թերեզան Երևան է եկել 1988 թ. դեկտեմբերին՝ Սպիտակի սարսափելի երկրաշարժից անմիջապես հետո, և Ն. Յովհաննիսյանը՝ որպես Հայաստանի հաղաղության հայկական կոմիտեի անդամ, եղել է Չվարթնոց օդանավակայանում դիմավորողների թվում, այնուհետև անձամբ ուղեկցել Վազգեն Ա-ի հետ հանդիպմանը, հիվանդանոց, ապա նաև ավերված Լեռնիական։ Մայր Թերեզան նրան ասել է. «Հայերը բախտավոր են, որ Վազգեն Առաջինի նման իմաստուն հոգևոր առաջնորդ ունեն» (էջ 156)։ Նա միաժամանակ հետաքրքիր ձևով է բնութագրել միջազգային մեծ ճանաչում ունեցող մանկական բժիշկ Ռոշալին, որը Լեռնիականում օր ու գիշեր գտնվել է հիվանդանոցում՝ երկրաշարժից վիրավոր երեխաների կողքին։ Այս հատվածից տեսնում ենք հոգևոր գործին ծառայող միջազգային հեղինակություն ունեցող երկու մեծերի՝ Մայր Թերեզային ու Վազգեն Ա-ին։

Ն. Յովհաննիսյանը 1993-ին Ֆուլբրայթի ծրագրով մեկ տարուց ավելի եղել է ԱՄՆ-ում, տարբեր համալսարաններում կարդացել դասախոսություններ, քննարկել Արցախյան հիմնախնդիրը։ Այդ հանդիպումներից մեկը եղել է Պոլ Գոբլի հետ, որի՝ Մեդրին հանձնելու թուրքական ծրագիրն այնքան տազնապ էր առաջացրել հայրենասեր հայ մտավորականության շրջանում։ Դիվանագիտական ճկուն հարցադրումներով պատմաբանը երես առ երես հակադրվել է Գոբլին՝ ասելով. «Այդ իրանական պատուհանի փակումը շնչահեղձ կանի Հայաստանին, մանավանդ եթե նկատի ունենանք, որ վրացական պատուհանն այնքան էլ հաջող չի գործում»։

Կարդալով Ն. Յովհաննիսյանի իմաստուն ու ազնիվ գիրքը՝ շատ կցանկանայի, որ այսօրվա Հայաստանի կառավարողները համոզվեին, թե որքան հակառակ ու թուրքամետ են նրանց գործողությունները։ Նրանք անում են ճիշտ հակառակը, ինչը գործնական ձևով մեզ պատգամում է իմաստուն դիվանագետը, մեծատեսակի պատմաբանն ու հայրենասերը։

### ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ

## Դոկտ. Վ. Շեմմասյանի «Մուսա լեռան հայերը» հատորը

Ֆրեզնոյի Կալիֆոռնիա պետհամալսարանի հրատարակչությունը վերջերս լույս է ընծայել դոկտ. Վահրամ Շեմմասյանի «Մուսա լեռան հայերը։ Անհայտությունից դեպի ցեղասպանության դիմադրություն և համբավ, 1840-1915» խորագրով հատորը, որը հեղինակի երկրորդ գիրքն է այդ թեմայի շուրջ։ Առաջինը՝ «Մուսա լեռան հայերը։ Սոցիալ-տնտեսական և մշակութային պատմություն, 1919-1939 թթ.» վերնագրով, հրատարակվել էր 2015-ին Բեյրութի Հայկազյան համալսարա-

նի կողմից։


«Մուսա լեռան հայերը» համապարփակ պատմությունն է մի ժողովրդի, որն աչքի ընկավ 1915-ի ցեղասպանության դեմ իր հերոսական պայքարով։ Շեմմասյանը մանրագին ուսումնասիրել է Մուսա լեռան վեց գյուղերի սոցիալ-տնտեսական, կրթական, քաղաքական և կրոնական պատմությունը և ընթերցողին է ներկայացրել մինչ այժմ անհայտ փաստեր այդ վայրերի ազգաբնակչության մասին, որոնց հաստատականությունն ու խիզախությունն ի վերջո պակ-

վեց ինքնապաշտպանական հաջողությամբ», գրված է «Արմինիան Միոոր-Սփեթթեթթի» գրախոսականում։ Գիրքը վեր է հանում ժամանակաշրջանի կրթությունը, որի ընթացքում մուսալեռացիները մեկուսացված ժողովուրդի և անհայտությունից դարձան հավաքական ու միասնական մի բռնուցք՝ պատրաստ պաշտպանելու իրենց ազգային ինքնությունն ու իրավունքները։ Հատորը բաղկացած է 7 գլուխներից և վերջաբանից։ Այն ներառում է նաև 5 քարտեզ, 14 աղյուսակ և 162 հազվագյուտ

լուսանկար։

Դոկտ. Վահրամ Շեմմասյանը Նորթրիջի Կալիֆոռնիա պետհամալսարանի հայագիտական ուսումնասիրությունների ծրագրի հիմնադիրն ու տնօրենն է։ Արմատներով մուսալեռացի։ Դոկտորականի գիտական աստիճան է ստացել Լոս Անջելեսի Կալիֆոռնիա համալսարանից։ Դասախոսություններով հանդես է եկել տարբեր վայրերում, մասնակցել է միջազգային ակադեմիական գիտաժողովների։ Արժանացել է մրցանակների։

Հ. ՇՈՒԼԻԿՅԱՆ





նորաստեղծ և ակադեմիական երաժշտագիտության մեջ առաջին քայլերը կատարող երաժշտագիտական օջախը չունեի սեփական գիտական պարբերականը, ուստի կոմիտասագիտական հետազոտությունների հիմնական արդյունքների հրապարակման առաքելությունը ստանձնեց «ՀՍՍՌ ԳԱ տեղեկագիր հասարակական գիտությունների» գիտական հանդեսը:

1949 թ. սեպտեմբերի 26-ին լրանում է Կոմիտասի ծննդյան 80-ամյակը, որը նշվում է ըստ արժանվույն. հորեյանական հանդիսավոր միստ՝ Երևանի Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում՝ սեպտեմբերի 26-ին, երեկո՝ Երևանի արվեստի աշխատողների տանը՝ սեպտեմբերի 28-ին, հանդիսավոր երեկո՝ Երևանի պահածոների գործարանի ակումբում. բոլոր տեղերում զեկուցողը Սամսոն Գասպարյանն է:

տասի անվան պետական կոնսերվատորիան:

Կոմիտասագիտական այս անդրանիկ միջոցառման անդրադարձավ գիտական պարբերականն իր 1949թ. 9-րդ համարի «Լրատու» բաժնում, որտեղ տպագրվեց «Գիտական սեսիա, նվիրված Կոմիտասի ծննդյան 80-ամյակին» վերտառությամբ հոդվածը: Հոդվածից տեղեկանում ենք, որ սեսիային ներկա էին բազմաթիվ կոմպոզիտորներ, երաժշտագետներ, արվեստի այլ բնագավառների աշխատողներ, դասախոսներ և ուսանողներ: Նստաշրջանի բացման խոսքում կոնսերվատորիայի դիրեկտոր Կ. Ս. Սարաջևը հակիրճ բնութագրել է Կոմիտասի՝ որպես համաժողովրդային կոմպոզիտորի և մեծ մտածողի գործունեությունը, ապա զեկուցումներով համոզեց են եկել սեկտորի աշխատակիցները. Մաթևոս Մուրադյանը ներկայացրել է «Կոմիտասի

գիշերի ստեղծագործություններում:

Եվ, վերջապես, երրորդ և ամենագլխավորը հարմոնիայի հայկական լադային հիմքն էր, որ Կոմիտասի մոտ ստեղծվել էր նախորդ հայ կոմպոզիտորների ստեղծագործական փորձը քննադատաբար յուրացնելու, հայ ժողովրդի ու նրա կուլտուրայի պատմությունը և հատկապես հայկական ժողովրդական երաժշտությունը խորն ուսումնասիրելու և երաժշտության ասպարեզում Կոմիտասի ցուցաբերած կոմպոզիտորական բարձր տաղանդի շնորհիվ:

Սեկ տարի անց «Տեղեկագիր» 1950թ. սեպտեմբերյան համարում լույս է տեսնում Մուշեղ Աղայանի «Կոմիտասի երաժշտական կատարման արվեստը» հոդվածը: Ինչպես հայտնի է, երաժշտագետ, սեկտորի առաջին աշխատակիցներից, Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ Մուշեղ Աղայանը նաև երգիչ էր՝ բա-

# ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԿՈՄԻՏԱՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՄ

Հայաստանում ակադեմիական երաժշտագիտության հիմքերը դրվեցին Հայրենական մեծ պատերազմի տարիներին, երբ 1943-ին ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի ստեղծումից ընդամենն ամիսներ անց՝ 1944-ի մարտին, ԳԱ համակարգում ստեղծվեց երաժշտության պատմության ու տեսության սեկտորը, որը ղեկավարեցին հայ երաժշտագիտության մեծ երախտավորներ Գեորգի Տիգրանովը (1944), ապա Քրիստափոր Քուշնարյանը (1944-1948): Այդ սեկտորի հիման վրա հետագայում՝ 1948 թվականին, ստեղծվեց ՀՍՍՌ ԳԱ Արվեստների պատմության ու տեսության սեկտորը, իսկ 1958-ին՝ Արվեստի ինստիտուտը:

Հայկական ակադեմիական երաժշտագիտության ձևավորման, կայացման ու զարգացման գործում ծանրակշիռ դեր ունի «Լրաբեր հասարակական գիտությունների» գիտական պարբերականը (մինչև 1966 թվականը՝ «ՀՍՍՌ ԳԱ տեղեկագիր հասարակական գիտությունների»):

Նշանակալի է այն ներդրումը, որն ունեցել է ակադեմիական գիտական պարբերականը հայ արվեստագիտության կարևորագույն ճյուղերից մեկի՝ երաժշտագիտության առաջընթացի գործում: Իր գործունեության ամբողջ ընթացքում «Լրաբերը» (նաև՝ «Տեղեկագիր») սերտորեն համագործակցել է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ու նրա երաժշտագետների հետ՝ բազմաթիվ էջեր տրամադրելով երաժշտագիտական հարցերի լուսաբանմանը: Գիտական պարբերականի էջերում հայ և համաշխարհային երաժշտության պատմության և տեսության, երաժշտական ֆուլկլորագիտության և միջնադարագիտության, հայ ժողովրդի՝ այլ ժողովուրդների հետ ունեցած երաժշտական առնչությունների վերաբերյալ իրենց հետազոտությունների կարևոր արդյունքներն են հրատարակել հայրենական երաժշտագիտական մտքի ներկայացուցիչներից շատերը:

«Լրաբերը», որի երաժշտագիտական անդրադարձները չափազանց հարուստ են ու բազմաշերտ, ծանրակշիռ ներդրում ունի ակադեմիական կոմիտասագիտության կայացման ու առաջընթացի գործում:

**Ակադեմիական կոմիտասագիտության ձևավորումը և զարգացման սկզբնական փուլը. 1948-1957 թվականներ:**

1946 թվականից ՀՍՍՀ ԳԱ երաժշտության պատմության ու տեսության սեկտորի հարցերը հայտնվում են ԳԱ նախագահության ուշադրության կենտրոնում: Նախագահությունն առաջարկում է 1946-ին ստեղծել Կոմիտասի անվան կաբինետ՝ նրա երաժշտական ժառանգությունը խոր ուսումնասիրելու նպատակով: Շուտով սեկտորը դարձավ կոմիտասագիտության կենտրոնը, որտեղ դրվեցին ակադեմիական կոմիտասագիտության հիմքերը: Ու քանի որ



Սեպտեմբերի 28-ին Հայաստանի գիտությունների ակադեմիայի Արվեստների պատմության և տեսության սեկտորի երաժշտության բաժինը կազմակերպում է ցուցահանդես՝ նվիրված Կոմիտասի կյանքին և գործունեությանը: Սեպտեմբերի 30-ին տեղի է ունենում հանդիսավոր միստ՝ նվիրված Կոմիտասի ծննդյան 80-ամյակին, Լենինականի ֆիլհարմոնիայի դահլիճում (ղեկավար՝ Վ.Ումր-Շատ), իսկ հոկտեմբերի 2-ին՝ երեկո՝ նվիրված Կոմիտասի հիշատակին, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դահլիճում (ներածական խոսք՝ Ա. Տեր-Ղևոնդյանի): Հոկտեմբերի 2-ին՝ Կոմիտասի զերեզմանին այցելության ընթացքում, ելույթ են ունենում Գ. Բորյանը, Հ. Ղանիբեյանը, Ա. Տեր-Ղևոնդյանը, Մ. Աղայանը և Գ. Գյուրակյանը. հաջորդում է համերգը՝ Շ. Տալյանի, Տ. Սազանդարյանի և Հայաստանի ռադիոկոմիտեի երգեցիկ խմբի կատարմամբ:

Իսկ դրանից օրեր առաջ Հայաստանում Կոմիտասի հորեյանական միջոցառումների մեկնարկը յուրովի ազդարարել էր Հայաստանի կոմպոզիտորների միության երաժշտագիտական սեկցիան, Կոմիտասի ծննդյան 80-ամյակին էր նվիրված 1949թ. սեպտեմբերի 21-ի գիտական միստը, որի ընթացքում կարդացվեցին հետևյալ զեկուցումները՝ Սամսոն Գասպարյան. «Նյութեր Կոմիտասի կենսագրության և երաժշտական գործունեության վերաբերյալ», Մուշեղ Աղայան. «Կոմիտասը որպես երաժիշտ կատարող»:

Կոմիտասի հորեյանական միջոցառումների եզրափակիչ ակորդը դարձավ նրան նվիրված առաջին գիտական նստաշրջանը, որը Երևանի Արվեստի աշխատողների տանը հոկտեմբերի 4-ին գումարեցին ՀՍՍՌ ԳԱ արվեստների պատմության և տեսության սեկտորն ու Կոմի-

տեղն ու նշանակությունը հայկական երաժշտության պատմության մեջ», Ռոբերտ Աթայանը՝ «Ժողովրդական երգի հարմոնիզացիայի կոմիտասյան սկզբունքը» և Մուշեղ Աղայանը՝ «Կոմիտասի երգային կատարողական արվեստը» բանախոսությունները: Սեսիայի ընթացքում ներկայացված բոլոր երեք զեկուցումներն իր հերթական համարներում տպագրում է «Տեղեկագիրը»:

Այսպես, «Տեղեկագիր» հենց նույն համարում տպագրվում է Ռ. Աթայանի «Ժողովրդական երգի ներդաշնակության սկզբունքը Կոմիտասի մոտ» ծավալուն հոդվածը, որը դարձավ Կոմիտասի երաժշտական ոճի որոշ խնդիրների տեսական մշակման անդրանիկ փորձը: Իր հետազոտության արդյունքում երաժշտագետն առանձնացնում է կոմիտասյան հարմոնիզացիայի երեք հիմքերը, որոնցից ելնելով՝ Կոմիտասն իրագործեց ժողովրդական երգի իր յուրահատուկ ոճով հարմոնիզացիան: Առաջինը «կլասիկ պարզ ֆունկցիոնալութ-



յուն էր, որ բոլորի կողմից ընդունված էր որպես երաժշտության հարմոնիկ մտածելակերպի միակ ճիշտ հիմքը»: «Կոմիտասը իր հարմոնիզացիայի մեջ որպես առաջին հիմք ընդունեց ֆունկցիոնալ հարմոնիան, որ նա սովորել էր դեռևս Մակար Եկմայանի մոտ, կոմպոզիտոր Արենսկու դասագրքով:

Երկրորդը հարմոնիայի գունագեղությունն էր, բայց ոչ իմպրեսիոնիստական պլանի, չնայած նա լավ գիտեր ֆրանսիական իմպրեսիոնիստների գործերը, այլ գունագեղությունը որպես ստեղծագործության բովանդակությունը ռեալիստորեն արտահայտելու մի միջոց, այնպես, ինչպես դա կար Գլինկայի, Ռիմսկի-Կորսակովի և ռուսական շրջանի մյուս ներկայացու-

րիտոն, հետևաբար՝ միանգամայն տրամաբանական էր, որ նա իր հետազոտությունը նվիրեց Կոմիտաս երգչի կատարողական արվեստի առանձնահատկություններին բացահայտմանը:

Ընդգծելով, որ Կոմիտասը «հայ վոկալ արվեստի, նոր շրջանի կերտողն է, մեծ վարպետ և ուսուցիչ», միևնույն ժամանակ Մ. Աղայանը կարևորում է կոմիտասյան վոկալ կատարման արվեստի բազմակողմանի ուսումնասիրության անհրաժեշտությունը:

«Տեղեկագիր» 1950թ. 11-րդ համարում հրատարակվում է Մաթևոս Մուրադյանի «Կոմիտասի տեղն ու նշանակությունը հայկական երաժշտության պատմության մեջ» ծավալուն ու հիմնարար հոդվածը՝ նվիրված Կոմիտասի մահվան 15-ամյա տարելիցին, որը երաժշտագետի առաջին խոսքն էր կոմիտասագիտության մեջ, միևնույն ժամանակ Կոմիտասի վաստակը համակողմանիորեն ներկայացնող առաջին փորձը հայրենական ակադեմիական երաժշտագիտության մեջ: Հեղինակը ներկայացնում է Կոմիտասի ստեղծագործությունը, քննության առումն նրա երաժշտագիտական գործունեությունը, ձևակերպում նրա ներդրումը երաժշտական ֆուլկլորագիտության ասպարեզում, արժևորում նրա երաժշտական հրապարակախոսական գործունեությունը, ներկայացնում նրան որպես երգիչ-կատարող, խմբավար ու մանկավարժ: Ամփոփելով իր արժեքավոր հետազոտությունը՝ Մ. Մուրադյանը նկատում է. «...մեծ է Կոմիտասի դերն ու նշանակությունը մեր երաժշտության պատմության մեջ, որովհետև նա իր մեծարժեք ստեղծագործությամբ հիմք դրեց հայկական երաժշտագիտությանը և դրանով իսկ հնարավորություն տվեց լրջորեն զբաղվելու մեր անցյալի երաժշտական երևույթների գիտական ուսումնասիրությամբ»: Միևնույն ժամանակ երաժշտագետը նկատում է, որ «...սովետահայ երաժշտագիտության կարևորագույն խնդիրներից մեկը Կոմիտասի թողած հարուստ ժառանգության բազմակողմանի և խորագլխի ուսումնասիրությունն է, քանի որ այդ ժառանգության քննադատաբար օգտագործումը մեծապես օգնում է սովետահայ կոմպոզիտորներին ու երաժշտագետներին՝ լուծելու մեր առջև դրված շատ կարևոր հարցեր: Կոմիտասն այսօր էլ իր երաժշտական ստեղծագործությամբ լավագույն կերպով մասնակցում է մեր ժողովրդի գեղարվեստական դաստիարակության գործին: Կոմիտասի մեծարժեք երաժշտական ժառանգությունը հանդիսանում է այն հիմքը, որի վրա բարձրանում է սովետահայ երաժշտական կուլտուրայի հոյակապ շենքը»:

(Շարունակելի)

ԱՆՆԱ ԱՍՏՏՐՅԱՆ

**ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի տեղակալ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր**





ից մինչ օրս ԵՊՀ կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի մաթեմատիկական մեթոդների և մոդելավորման ամբիոնի պրոֆեսոր է: 1988-2001թթ. եղել է նշված ամբիոնի վարիչ, 1993-95թթ. նույն ֆակուլտետի ղեկան:

1994-1998թթ. հանդիսացել է Հայկական պետական մանկավարժական ինստիտուտի ղեկավար: 1998-2002թթ. ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի նախագահ: 2002-2007թ. հանդիսացել է ԵՊՀ ղեկավարի խորհրդական:

**Գիտական գործունեությունը:** Գ. Ե. Բաղդասարյանը առաջնեկն է հայրենական գիտական աշխարհում զազի գերծայնային հոսանքով շրջհոսվող բարակապատ մարմինների կայունության (ֆլատեր) հարցերի ուսումնասիրման բնագավառում: Նրա ջանքերի շնորհիվ ֆլատերի խնդիրները դարձան գիտական հանրության ուսումնասիրման առարկան և

Համընդհանուր ճանաչում ստացան Գ. Ե. Բաղդասարյանի աշխատությունները, որոնցում առաջարկված են շերտավոր անիզոտրոպ սալերի և թաղանթների ոչ գծային ստիպողական, պարամետրական և ֆլատերային տատանումների հետազոտման արդյունավետ հաշվարկային սխեմաներ և անալիտիկ մեթոդներ, մասնավորապես ցույց է տրվել՝

■ստիպողական տատանումներում նոր տիպի ռեզոնանսների հանդես գալը՝ պայմանավորված ոչ գծայնության հաշվառմամբ;

■շրջհոսման միջկրիտիկական արագությունների դեպքում ստացվողնար տատանումների գոյության հնարավորությունը;

■ստորին կրիտիկական արագության գոյությունը և նրա մեծության հաշվման ուղիները:

■Կառուցված է հաղորդիչ բարակ մարմիններում փոխկապակցված մեխանիկական և էլեկտրամագնիսական պրոցեսների նկարագրման ու հետազոտման ընդհանուր տե-

րածման հետազոտման տեսական հիմքերը, որոնց օգնությամբ՝ մշակվել են այեզոմագնիսական և մագնիսատրիկցիոն միջավայրերում մագնիսականության փոխկապակցված ալիքների տարածման հետազոտման տեսական հիմքերը; ապացուցվել է այեզոմագնիսական (կամ մագնիսատրիկցիոն) էֆեկտով պայմանավորված սահքի մակերևութային և ծեղքային նոր տիպի ալիքների գրգռման հնարավորությունը; հայտնաբերված է նաև ուղեկցվող մակերևութային տատանումների գոյության հնարավորությունը, որը թույլ է տալիս ակուստիկ ալիքները մի այեզոմագնիսական միջավայրից հարողել մի այլ այեզոմագնիսական միջավայր՝ առանց մեխանիկական կոնտակտի:

Գ. Ե. Բաղդասարյանի գիտական գործունեությանը բնորոշ են արդիականությունը, նորարարությունը, բազմակողմանիությունը և նպատակաուղղվածությունը: Գ. Ե. Բաղդասարյանի գիտական հոդվածները, միջազգային գիտաժողովների զեկուցումները, ընդհանրացնող, ամփոփիչ հոդվածները հայտնի են և ուսումնասիրվում են Ռուսաստանի, Եվրամիության, ԱՄՆ-ի և աշխարհի այլ երկրների գիտական կենտրոններում:

Գ. Ե. Բաղդասարյանին շնորհվել է մի շարք պետական և անվանական մրցանակներ, մեդալներ, կոչումներ՝ ՀՀ նախագահի մրցանակ տեխնիկական գիտությունների և ինֆորմացիոն տեխնոլոգիաների բնագավառում՝ «Մագնիսաառաձգական փոխազդեցությունների էֆեկտները հաղորդիչ սալերում և թաղանթներում» (անգլերեն) մենագրության համար, գիտության վաստակավոր գործիչ կոչում, ՀՀ վարչապետի ոսկե մեդալ, ՀՀ կրթության և գիտության նախարարության ոսկե մեդալ, ՀՀ կրթության և գիտության նախարարության ոսկե մեդալ, ՀՀ ՎԱ Վաստակագիր: Համաշխարհային գիտության զարգացմանը նպաստելու և ունեցած փայլուն արդյունքների համար Ամերիկյան կենսագրական ինստիտուտի կողմից շնորհվել է ոսկե մեդալ - American Gold Medal in Honor:

Շնորհավորելով ՀՀ ՎԱՍ ակադեմիկոս Գ. Ե. Բաղդասարյանին 85-ամյա հոբելյանի կապակցությամբ, ցանկանում ենք նրան քաջառողջություն, երկար տարիների կյանք, նորանոր հաջողություններ գիտական, գիտակազմակերպչական և ազգային-հասարակական գործունեության բոլոր ասպարեզներում: Կուզենայինք ապագայում ևս նրան տեսնել գիտական նորարար ուղղությունների ակոսման, ազգային-հասարակական ժամանակակից խնդիրների կանխատեսման, ձևավորման և նրանց հետագա իրականացման համար մարտնչողի դերում:

**Ռ. Մ. ՄԱՐՏԻՐՈՅԱՆ**

**ՀՀ ՎԱՍ նախագահ, ակադեմիկոս**

**Լ. Ա. ԱՆԼՆՈՎԱՆ**

**ՀՀ ՎԱՍ մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-բարտուղար, ակադեմիկոս**

**Վ. Վ. ԱՎԵՏԻՍՅԱՆ**

**ՀՀ ՎԱՍ մեխանիկայի ինստիտուտի տնօրեն, ֆիզ.-մաթ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր**

## Ականավոր գիտնականն ու մեծ հայրենասերը

Լրացավ ականավոր գիտնական-մեխանիկոս, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս, պրոֆեսոր Գևորգ Երվանդի Բաղդասարյանի ծննդյան 85-ամյակը:

Գ. Ե. Բաղդասարյանը ծնվել է 1936 թվականի հունվարի 13-ին Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ գյուղում: Նախնական կրթությունը ստացել է Ապարան քաղաքի միջնակարգ դպրոցում, որն ավարտել է 1953թ.: Ավարտելով դպրոցը, ընդունվել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի մեխանիկայի բաժինը, որն ավարտել է 1958 թ.-ին գերազանցության դիպլոմով: 1964թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Գերծայնային գազով շրջհոսելիս անիզոտրոպ թաղանթների և սալերի կայունության խնդիրներ» թեմայով, իսկ 1977 թ.-ին՝ դոկտորական ատենախոսություն «Բարակ սալերի և թաղանթների մագնիսաառաձգականության խնդիրներ» թեմայով: 1990թ. ընտրվել է ՀՀ ՎԱՍ թղթակից անդամ, իսկ 1994թ.-ին՝ ՀՀ ՎԱՍ ակադեմիկոս:

**Աշխատանքային գործունեությունը** Գ. Ե. Բաղդասարյանը սկսել է 1958 թվականից՝ աշխատելով որպես ՀՀ ՎԱՍ մեխանիկայի ինստիտուտի գիտաշխատող, իսկ 1964-79 թթ. որպես ավագ գիտաշխատող: 1979-88 թթ. եղել է մեխանիկայի ինստիտուտի մագնիսաառաձգականության բաժնի վարիչ, իսկ 1986-1987 թթ.՝ մեխանիկայի ինստիտուտի տնօրեն, 2006թ. առ այսօր ինստիտուտի գլխավոր գիտաշխատող է: Մեխանիկայի ինստիտուտում ծավալած գիտական գործունեությանը զուգահեռ Գ. Ե. Բաղդասարյանը համատեղությամբ բազմաթիվ տարիներ իրականացնում է նաև մանկավարժական գործունեություն Երևանի պետական համալսարանում: 1983 թ.-

այդ ուղղությունը Հայաստանում լուրջ զարգացում ստացավ:

Գ. Ե. Բաղդասարյանը մեխանիկայի հայկական դպրոցի վառ անհատականություններից մեկն է և իր տաղանդի փայլուն դրսևորմամբ ստեղծել է արդեն ճանաչված իր ուրույն գիտական դպրոցը: Գ. Ե. Բաղդասարյանի ղեկավարությամբ պաշտպանվել են տասնյակից ավել դոկտորական և թեկնածուական ատենախոսություններ:

Գ. Ե. Բաղդասարյանը հեղինակ և համահեղինակ է հրատարակած յոթ մենագրությունների (Багдасарян Г.Е. Ряды Фурье. Ереван, Изд. ЕрПИ, 1982, Амбарцумян С.А., Багдасарян Г.Е., Белубекян М.В. Магнитоупругость тонких оболочек и пластин. Москва, "Наука", 1977, 288с., Амбарцумян С.А., Багдасарян Г.Е. Электропроводящие пластинки и оболочки в магнитном поле. Москва, "Наука", 1996, -288с., Багдасарян Г.Е. Колебания и устойчивость магни-тоупругих систем. ЕГУ, 1999, -440с., Багдасарян Г.Е., Даноян З.Н. Электро-магнитоупругие волны. Ереван, ЕГУ, 2006, -490с., Baghdasaryan G., Mikilyan M. Effects of magnetoelastic interactions in conductive plates and shells. Springer, 2016, -286p. Baghdasaryan G., Danoyan Z. Magnetoelastic waves. Springer, 2018, -251p.), որոնք հանդիսանում են ժանրակշիռ ներդրում՝ տեսական և կիրառական մեխանիկայի մի այնպիսի կարևորագույն ոլորտում, ինչպիսին հոծ միջավայրի մեխանիկայի բնագավառն է: Նրա աշխատանքները հիմնականում ընդգրկում են հոծ միջավայրի մեխանիկայի՝ տատանումներ և կայունություն, ալիքային պրոցեսներ ոլորտները, համահեղինակ է մագնիսաառաձգականության տեսության:

սություն (համահեղինակներ Ս.Ա.Համբարձումյան և Մ.Վ.Բելուբեկյան): Ձևակերպված են մաթեմատիկական ֆիզիկայի համապատասխան նոր խնդիրների դրվածքները և այդ հիմքի վրա ի հայտ են բերված մի շարք նոր երևույթներ՝ պայմանավորված հոծ միջավայրերի և տարբեր բնույթի ֆիզիկական դաշտերի փոխազդեցությամբ: Դրանցից են՝ պարամետրական ռեզոնանսի հնարավորության բացառումը; վտանգավոր ֆլատերային տատանումների մարումը; տատանման հաճախության էական մեծացումը; ստիպողական տատանումների ամպլիտուդի էական փոքրացումը հաստատուն մագնիսական դաշտի օգնությամբ; միտցային տեսությամբ հայտնի բանաձևի ընդհանրացումը; ստիպողական և պարամետրական տիպի ռեզոնանսային տատանումների գրգռման հնարավորությունը ոչ ստացիոնար մագնիսական դաշտի օգնությամբ; տարբեր բնույթի ստիպողական և պարամետրական տատանումների վարքի ղեկավարումը հաստատուն մագնիսական դաշտի միջոցով; ոչ գծային մագնիսաառաձգական տատանումների ամպլիտուդա-հաճախականություն կապի օպտիմալ կառավարումը ստացիոնար մագնիսական դաշտի առկայությամբ:

Առաջարկված են ստացիոնար և ոչ ստացիոնար մագնիսական դաշտերում գտնվող գերհաղորդիչ և մագնիսապես փափուկ ֆերոմագնիսական մարմինների, մասնավորապես բարակ սալերի ամրության, կայունության և տատանումների պրակտիկ նշանակություն ունեցող կարևոր խնդիրների մաթեմատիկական մոդելավորման և լուծման մեթոդներ:

Ալիքային պրոցեսների այս ոլորտում մշակվել են այեզոմագնիսական և մագնիսատրիկցիոն միջավայրերում մագնիսաակուստիկ փոխկապակցված ալիքների տա-

## Նարինե Աբգարյանը Եվրոպայի ամենահուզիչ գրողների շարքում

Բրիտանական «Գարդիան» օրաթերթը վերջերս ռուսալեզու հայ արձակագիր Նարինե Աբգարյանի անունն ընդգրկել է Եվրոպայի ամենահուզիչ գրողների շարքում: Դրան մասնավորապես նպաստել է Աբգարյանի «Երկնքից ընկավ երեք խնձոր» վեպի անգլերեն հրատարակությունը Մեծ Բրիտանիայում: Այն հիմա առկա է նաև «Ամազոն» համացանցային հարթակում:

1971-ին Տավուշում ծնված, ութ գրքի հեղինակ, ռուսական գրական բարձրագույն մրցանակների արժանացած Նարինե Աբգարյանը բնակվում է Մոսկվայում, սակայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի է ու հաճախ է լինում հայրենիքում: Այս օրերին էլ նա Հայաստանում է՝ փորձելով իր գրչով և գործով թեթևացնել արցախցի տարագիրների վիճակը:

Նշենք, որ անգլերենը տասներեքերորդ լեզուն է, որով թարգմանվել է Նարինե Աբգարյանը: Մինչ այդ նրա ստեղծագործությունները թարգմանաբար լույս են տեսել հայերեն, ֆրանսերեն, իտալերեն, բուլղարերեն, լատվերեն, էստոներեն, հունգարերեն, ուկրաիներեն,



չինարեն, արաբերեն, թուրքերեն և հնդկական մալայալամ լեզվով՝ այդ լեզուներով ընթերցողներին տեղյակ դարձնելով Հայաստանի ու հայ ժողովրդի մասին:

**Ա. ԲԱՆՉԻՆՅԱՆ**

## 93 հազար դոլարով վաճառվել է 17-րդ դարի հայկական ձեռագիր ավետարան

Դեկտեմբերի 3-ին լոնդոնյան հանրահայտ Sotheby's աճուրդի սրահում 69.300 ֆունտ սթեռլինգով (մոտ 93.000 դոլար) վաճառվել է վաղ 17-րդ դարի հայկական նկարազարդ ձեռագիր ավետարան, տեղեկացնում է «Արմինյն Միդդլ-Սիեքսթերթ» շաբաթաթերթը:

Հորթի կաշվից պատրաստված և զարդանկարներով դրոշմատպված կազմով գրքի նախնական գինը տատանվել էր 7-10 հազար ֆունտ սթեռլինգի միջև: Ենթադրվում է, որ 197- էջանոց մատյանը (147x100 մմ) պատրաստվել է Միջագետքի հինավուրց քաղաք Ամիդում (այժմյան Դիարբեքիրի վիլայեթում) և ըստ աճուրդի կենտրոն-սրահի կայքում տեղադրված նկարագրության՝ նշանակալիորեն նման է Բալթիմորի Ուոլտերս արվեստի պատկերասրահում (Walters Art Gallery) պահվող ձեռագրին, որն Ամիդի գրչատանը

17-րդ դարի սկզբներին պատրաստել է գրիչ Մելքոնը, և նկարազարդել է Հովհաննեսը:

Գիրք-մատյանի յուրաքանչյուր բաժնի սկզբում կարելի է տեսնել մի ավետարանչի մանրանկարը, իսկ հանդիպակաց էջում՝ 27 տողերի վրա՝ երկու սյունակներով գրավոր տեքստը՝ ոսկեզօծ օրմինոնորֆիկ տառերով և բոլորգի գլխազարդերով: Կան նաև բազմաթիվ լուսանցազարդեր:



Ավելի քան 100 տարի առաջ՝ 1920 թ. հոկտեմբերի 30-ին, տեղի ունեցավ հայոց նորագույն պատմության ամոթալի իրադարձություններից մեկը. Հայաստանի համար ռազմավարական ու տնտեսական խոշոր նշանակություն ունեցող Կարս բերդաքաղաքն առանց որևէ դիմադրության հանձնվեց թուրքին:

Մի քանի խոսքով ընթերցողին հիշեցնենք Կարսի պատմությունը: Բերդը հիշատակվում է IX դ., թեև հիմնադրվել է ավելի վաղ: Եղել է Կարսի թագավորության կենտրոնը: Ընկել է սելջուկ-թուրքերի, մոնղոլների, Լենկ-թեմուրի, Օսմանյան թուրքիայի տիրապետության տակ: 1828 և 1856 թթ. ռուսական զորքերը միառժամանակ գրավել են Կարսը: 1877 թ. նոյեմբերի 6-ին գեներալ Յ. Լազարևի ռուսական զորախումբը թուրքերից գրավել է բերդաքաղաքը. այն դարձել է Կարսի մարզի կենտրոնը: Հայ բնակչությունը մշտապես կազմել է մեծամասնություն (ապրել են թուրքեր, ռուսներ, հույներ, ասորիներ), ունեցել է երեք եկեղեցի, գործել են արական և օրիորդաց դպրոցներ, հրատարակվել են շաբաթաթերթեր ու օրաթերթեր: Կային գործարաններ (մասնավորապես գարեջրի, օճառի, կրի, աղյուսի, հանքային ջրերի լցման),

խճուղիներով և երկաթուղով կապված էր Ալեքսանդրապոլի (Գյումրի), Սարիղամիշի հետ: Ռուսաստանում 1917 փետրվարյան հեղափոխությունից հետո՝ մարտին, Կարսում ստեղծվել է զինվորների պատգամավորների խորհուրդ: Անդրկովկասյան սեյմի վրացի ղեկավար Ակակի Չխենկելու հեռագրային դավադիր հրահանգով գեներալ Թ. Նազարբեգյանի ղեկավարած Հայկական կորպուսը 1918 թ. ապրիլի 12-ին թողել է քաղաքը, և դիմադրության չհանդիպելով՝ թուրքական զորքը մտել է Կարս: Բնակչությունը կողոպտվել ու կոտորվել է:

Հայաստանի Առաջին հանրապետության օրոք՝ 1919 թ. ապրիլին, հայկական բանակը գրավել է Կարսը: Ինչպես վերը նշվեց, 1920 թ. հոկտեմբերի 30-ին թուրքական բանակը դարձյալ առանց դիմադրության մտել է Կարս: 1921 թ. մարտի 16-ին Մոսկվայի խորհրդա-թուրքական բարեկամության և եղբայրության պայմանագրով Կարսը հանձնվել է թուրքիային:

Կարսի 1920 թ. անկման մասին կա հուշագրական ու պատմագիտական ահեղի գրականություն, վեր են հանվել, լուսաբանվել, համաձայնորեն վերլուծվել դրա տարաբնույթ պատճառները: Մեր նպատակը չէ այստեղ անդ-

րադառնալ դրանց:

Ստորև ներկայացվող «Կարսի անկումը» վերնագրով հոդվածը պատկանում է խնդրո առարկա իրադարձության ժամանակակցի՝ մեծահամբավ Դավիթ Անանունի գրչին, ով դեպքերից ընդամենը մի քանի շաբաթ անց իր խորագրին, սառը, զգաստ դատողություններով լի մտորումները, կոչ-հորդորը հրապարակել է Երևանում լույս տեսնող «Հայաստանի կոոպերացիա» երկշաբաթաթերթում (21-22, նոյեմբեր, 1920, էջ 859-861): Որքան մեզ հայտնի է, հոդվածն առ այսօր շրջանառության մեջ չի դրվել: Ծանոթանալով չափազանց ուշագրավ, բովանդակալից այս նյութին՝ ընթերցողը, կարծում են, կհանգի մեծօրյա խառնակ իրականությանն առնչվող, արդիական հնչեղություն և բազում զուգահեռներ ունեցող հետևությունների: Ինչպես ասում են՝ պատմական իրադարձությունները կրկնվելու սովորություն ունեն:

**Անուշավան ԶԱԲԱՐՅԱՆ**  
«Պատմաբանասիրական հանդես»-ի գլխավոր խմբագիր, բանասիրական գիտությունների դոկտոր

Կարսը ընկավ: Մի անգամ էլ հաղթանակեց թուրքի տոհմական բնազդը: Մի անգամ էլ պարտվեց հայի պառակտումն քաղաքակրթությունը: Կարսը ընկավ ոչ թե թուրքի թվական ու տեխնիկական գերազանցության շնորհիվ: Ո՛չ: Կարսը ընկավ, որովհետև թուրքը մեզ գերազանցեց իր ոգու կորուվով, իր ցեղային շաղկապի ամրությամբ: Նա շաղկապատող խուժանի չնմանվեց: Նրա մեջ լռեցին անհատական ու խմբակցական ծայները: Նա ձուլվեց մի կարծր մարմնի մեջ և իր ճիրանների մեջ առավ հայկական ամրոցը: Թուրքը իմացավ, թե ինչի է ձգտում, ինչի համար է կռվում: Հայն էր, որ չիմացավ, թե ինչ է պաշտպանում և ինչ մատնում թշնամու ձեռքը: Գիտակցության լույսը չողողեց նրա մաղձոտ հոգին: Ցեղային բնազդը ջերմություն չմատակարարեց նրա կծկված սրտին: Եվ նա հանձնեց իր վահանը թշնամուն: Հանձնեց, ինչպես այդ արել էր դարեր առաջ: Հանձնեց, որ ստորանա և նվաստացման մեջ քրքրե իր մարմինն ու հոգին: Նորից մազլցե ազատության բարձունքը, նորից վերապրե իր պատմության մռայլ էջերից մեկը, պատմություն, որ հիշեցնում է անսկիզբ ու անվախճան քավարան:

Կարսը ընկավ, որովհետև մենք ուսումն էինք, շրջում, բազմանում, բայց չունեինք մեր սրբության սեղանը: Ո՞ր է սրբազան դող առաջացնող հայկական տաճարը: Հայրենի՞քն է այն, ա՞զգը, սոցիալական որևէ բարդ կնճի՞ք: Ո՛չ ոք պատասխան չի կարող տալ: Որովհետև հայը դարեր շարունակ մատնված է բուսական կյանքի և նոր էր միայն իր համար ընտրում առաջնորդ աստղ: Իր հոգին ազնվացնող խանձարուրի մոտ է նստել մեր ժողովուրդը: Եվ ահա, բորենիների պես, դեպի մեր աստղամանուկի խանձարուրը իրանց արյունոտ թաթերն են մեկնում դարավոր նեղիչները: Նրանք դարանամուտ աստած են շրխկացնում և թունոտ լորձուկն թափում բոլոր անկյուններից:


Ահա Ռուսաստանը, որ ընդարմացրել է մեր ողնաշար Դարաբաղը, Ջանգեզուրը, Գողթանը և Դազախը: Կարող ես գործի կանչել լեռների ու անտառների կտրիճներին: Պայքարողների պահեստ ունիս, բայց նրանք մնացել են կառչած իրանց բնակավայրին և չեն կարող օգնության գալ մեղվող կենտրոնին:

Ահա Լոռին ու Ախալքալաքը, որոնք մատնվել են կաթվածի, որովհետև մեր հարևանը ընչաքաղց է և սուր ախորժակի տեր:

Ահա եվրոպական մեծ պետությունները, որոնք մեր հայրենիքը և մեր արյունը դարձրել են մանր դրամանիշ, որով փակում են իրանց խոշոր հաշիվները:

Այս բոլորը տեսնում է թուրքը: Տեսնում է և ճանկերը մեկնում մեր հարությունը անձնավորող խանձարուրը, դեպի մեր Անկախությունը:

Թուրքը հաջողություն տոնեց, նա Կարս մտավ, որովհետև ինքը իրան կոչված է համարում իշխանություն և-



նելու: Նա ընտելացել է իշխողի կոչման: Իշխողը և ռազմիկ է: Նա գիտե, թե ինչ է նվաճում, ինչ պաշտպանում կամ ինչ կորցնում:

Հայը ձախորդության հանդիպեց, որովհետև նրա ինքնիշխանության զգացումը դեռ խանձարուրի մեջ է, որովհետև նա ինքն իրան մի մոլորակ է համարում, որ պիտի ուղեկցի օտար լուսավորներին: Երբ նրա միտքն ու հոգին կմաշեն ակնկալության նվաստացնող շրջանը, երբ նրա հոգին կնվաճե լուսավոր դառնալու փառասիրությունը, այն ժամանակ նա կունենա իր ուխտի տապանակը, որի համար և կիմանա ծառանալ թշնամու դեմ:

Այսօր հաջողությունների ու ձախորդությունների մեջ ենք նվաճում մեր ուխտի տապանակը -Հայրենիքն ու Անկախությունը: Կարսի անկումը ծանր հարված է մեր ազգային ինքնասիրության: Սակայն այդ հարվածը չպիտի վիատեցնե մեր հոգին: Այդպես է նայում թշնամին իր արածի վրա: Իր հարվածով նա կամենում է փոշիացնել մեզ և այդ փոշին տորել իր երկաթե կրունկներով: Մենք պիտի ցույց տանք, որ թշնամու հարվածը կարող է փոշիացման փոխարեն կարծրացնել մեր մարմինը, կռել դիմադրական նոր կորով:

Թո՛ղ լռե հայի մեջ մռայլ ինքնաժվատման արիեստը: Թո՛ղ բութ խոնարհության փոխարեն նրա մեջ ծառս լինի պայծառ ըմբոստացումը: Թո՛ղ գերագույն գեղեցկութե-

յուն համարվի մահը հանուրի առաջ և հանուրի բարության համար, և մենք կհաղթենք:

Կարսը ընկավ, որովհետև թշնամին իր գոյության իմաստը տեսնում է թուրքիայի հզորության ու հարատևության մեջ: Այստեղ անհատը, քաղաքացին մոռացավ իրան, ամբողջովին ստորադասեց իր եսը հայրենիքի պահանջներին և իր համարձակությամբ փառավորեց նրա անունը:

Կարսը պիտի նվաճվի մեր ձեռքով այն օրը, երբ հայի հայրենասիրական առաքինությունները գերազանցեն թուրքի նման բարեմասնությունները: Այդ ուղղությամբ հոգնություն պիտի կրե մեր միտքը, նոր մղումներ ստանա մեր կամքը:

Կարսը կնվաճվի այն օրը, երբ ինքներս կնվաճենք մեզ, այսինքն՝ կդառնանք մի կարծր մարմին, որ մահ է նյութում այն բոլոր երախներին, որոնք մեզ կլանելու ձգտումներ են ցույց տալիս:

Ամփոփենք մեր տարերքը կազմակերպված պայքարի մեջ: Հրաժարվենք բուսական գոյությունից: Առաջնորդող աստղը Հայրենիքն ու Անկախությունն է: Բարձրացրո՛ւ, Հայ մարդ, աչքդ դեպի այդ լուսատուն և անուժ դարձրո՛ւ այն բոլոր բռնկոցները, որ կամենում են հափշտակել նրա ճառագայթների ջերմությունը:

**Դ. ԱՆԱՆՈՒՆ**

## Արցախի էներգետիկան պատերազմից առաջ և հետո

Պատերազմից առաջ Արցախի Հանրապետությունում մեծ ծավալի աշխատանքներ էին կատարվում էներգետիկայի զարգացման ուղղությամբ: Արցախում շահագործման մեջ էին գտնվում 27 հիդրոէլեկտրակայաններ, որտեղ տեղադրված դրվածքային գունարային հզորությունը կազմում էր 192 ՄՎտ: Տարեկան կարող էր արտադրվել 887 միլիոն ԿՎտժէլեկտրական էներգիա: Միայն «ԹՐԴԻ-1», «ԹՐԴԻ-2» և «ԹՐԴԻ-3» հէկ-երն էին աշխատում ռոզման համակարգի համար, մյուսները տեղադրված են գետերի բնական ջրահոսքի վրա:

Ներկայումս գոյություն ունեցող հիդրոէլեկտրակայաններից Արցախի տարածքում է մնացել վեց հէկ՝ Սարսանգի, Գետավանի, ԹՐԴԻ-ի կասկադի չորս հէկերը: Այսինքն՝ 192 ՄՎտ դրվածքային գունարային հզորությունից մեր տարածքում է գտնվում 75 ՄՎտ գունարային հզորություն: Էլեկտրահաղորդման բարձրավոլտ գծերը, որոնք Արցախը կապում են մայր Հայաստանի հետ, անցնում են Լաչինի տարածքով:

Քարվաճառում մեր կողմից կառուցված բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծերի կարգավիճակն անորոշ է: Հիդրոէլեկտրակայանների հիդրոուժային սարքավորումները՝ տուրբին, գեներատոր, ենթակայան և այլն, հնարավորության սահմաններում ապամոնտաժվել և տեղափոխվել են Հայաստան: Այդ հէկ-երի ճնշումային խողովակաշարերը, պատվարային ջրընդունիչները մնացել են «ադրբեջանական» կողմում:

Հարկ է նշել, որ Հայաստան տեղափոխված հիդրոուժային էներգետիկական սարքավորումները պատկանում են գործարար մարդկանց: Թերևս ճիշտ կլինեք ստեղծել անկախ պետական մասնագիտական հանձնաժողով, որպեսզի գտնվեն այդ սարքավորումների արդյունավետ օգտագործման հնարավոր տարբերակները:

**Ստեփան ՊԱՊԻԿՅԱՆ**

**Հայկական էներգետիկական ակադեմիայի հիմնադիր նախագահ, տեխնիկական գիտությունների թեկնածու**



Արցախի «Ջերմաջուր» հէկ-ի մեքենայական սրահը մինչև ապամոնտաժումը





Դեկտեմբերի 8-ին՝ 84 տարեկանում ծանր և երկարատև հիվանդությունից հետո, մահացել է Բելառուսի ժողովրդական արտիստուհի Բելլա Ամովնա Մասունյանը: «Նրա մահը ծանր և անփոխարինելի կորուստ է բոլորիս, նրա ընկերների և նրա մեծ տաղանդի միլիոնավոր երկրպագուների համար, հսկայական կորուստ արվեստի համար, որին նա միմիայն էր իր ողջ կյանքը», - հայտարարել է Մինսկի Գորկու անվան ազգային ակադեմիական դրամատիկական թատրոնը, որտեղ 58 տարի աշխատել է «բելառուսական թատրոնի լեգենդ» անվանված դերասանուհին:

## Ի ՀՈՒՇ

# «ԳՆԱՍ ԲԱՐՈՎ, ԲԵԼԼԱ ԱՄՈՎՆԱ...»

Բելլա Մասունյան (1937-2020)

Ե Մինսկի Գորկու անվան ազգային ակադեմիական դրամատիկական թատրոնը, որտեղ 58 տարի աշխատել է «բելառուսական թատրոնի լեգենդ» անվանված դերասանուհին:

Բելլա Մասունյանը ծնվել է 1937-ին Պավլոգրադում (Դնեպրոպետրովսկի մարզ, Ուկրաինա) հայ հոր և լեհ մոր ընտանիքում: Ավարտել է Բելառուսի թատերական արվեստի պետական ինստիտուտը: 1961 թվականից աշխատել է Գորկու անվան թատրոնում: Գեղեցկատես, խորունկ, կրքոտ և մտավորական խառնվածքով Մասունյանը կատարել է դրամատիկական հերոսուհիների դերեր, որոնք բնութագրվել են հուզականությամբ, ռոմանտիկ գունագործման և պատկերների հոգեբանական խորությամբ: Հանդես է եկել 100-ից ավելի դերակատարումներով՝ «Երկուսը ճոճանակի վրա», «Արշալույսներն այստեղ խաղաղ են», «Երեք թույր», «Պիզմալիոն», «Տեսնելով սպիտակ գիշերները», «Մեկ երկնքի տակ» և բազում այլ բեմադրություններում: Արժանացել է բազմաթիվ մրցանակների ու պարգևների: Նրա մասին է Բելառուսի առաջատար թատերական քննադատ Տատյանա Օռլովայի «Այլմոլորակուհին» գիրքը (2012):

Իսկ մեզ համար կարևոր է իմանալ, որ Բելլա Մասունյանը ոչ միայն 1980-ականներին Գորկու անվան թատրոնի կազմում հյուրախաղերով հանդես է եկել Երևանում, այլև մասնկության տարիներին, Երկրորդ աշխարհամարտի տարիներին որոշ ժամանակ ապրել է Հայաստանում: Նրա հայրը՝ Համո Մասունյանը, եղել է ռազմական օդաչու: Աղջկան ապրել է տատիկի՝ Նեկտար Գրիգորյանայի մոտ, որին պաշտել է: 2019-ին Մինսկի հայերի «Միասին» պարբերականին տված հարցազրույցում նա ասել է. «Իմ հորեյսանին Հայաստանի դեսպանն էի մասին լավ ար-

տահայտվեց՝ հայ ժողովրդի բելառուս դուստր: Հայաստանն իմ մեջ զուգորդվում է գործած գլխարկ հագած տատիկիս հետ: 1915 թվականին թուրքերը սպանել են պապիկիս, և նա այրի է մնացել երեք երեխաների հետ: Նիհար, հմայիչ հայուհի էր... Ես երբեք չեմ սկեռվել մարդկանց ազգության վրա, բայց երբ մի երաժշտական մրցույթում տեսա մասնակից հայուհու, ցանկացա, որ նա՝ լինի հաղթողը: Հավանաբար, արյունն ազդում է եմթագիտակցական մակարդակի վրա, չնայած մայրս լեհուհի է, ու մենք երկար չենք ապրել Հայաստանում: Ինձ դուր է գալիս հայ ժողովուրդը՝ համբերատար, հավատարիմ, մտավորական, տաղանդավոր: Նրան հաջողվեց գոյատևել ու շարունակել ապրել ու ինքնարտահայտվել: Հայերեն ես գիտեմ միայն «բալիկ ջան» և «ցավդ տանեմ» խոսքերը: Ցանկանում եմ հայ ժողովրդին մաղթել խաղաղություն: Նա արժանի է դրան, ինչպես յուրաքանչյուր ժողովուրդ, բայց քանի որ խոսում ենք Հայաստանի մասին, ես ուզում եմ, որ մարդիկ երջանիկ ապրեն, որ լիություն լինի ընտանիքներում, շողա արևը, ու ծաղկեն ծաղիկները: Հայաստանը գեղեցիկ երկիր է: Սկանը, լեռները, եկեղեցիները, օդն այնպիսին են, որ շունչդ կտրվում է...»:

Թատերագետների կարծիքով Բելլա Մասունյանը մեծ ներդրում է ունեցել բելառուսական թատերարվեստի զարգացման գործում: Նա ապրել է հանուն գործի և ոչ ոք չի ունեցել՝ թատրոնից ավելի սիրելի: «Գորկու ռուսական թատրոնի վերջին մեծ դերասանուհին: Գնաս բարով, Բելլա Ամովնա: Եվ, շատ հավանական է՝ գնաս բարով, ռուսական թատրոն», - գրել է բելառուս գրող Անատոլի Ավրուտինը դերասանուհու մահվան առթիվ:

Ա. Բ.

## «Նեմեսիս» օպերացիայի անհայտ էջերից

Ամտանոյի հաղթական զորքերը 1918 թ. մտան Ստամբուլ: Նրանք պահանջեցին թուրքերից դատի տալ պատերազմի հանցագործներին: Ստեղծվեց Արտակարգ պատերազմական ատյան, որը գավառի իշխանություններին պարտադրեց Արտակարգ ատյանին ներկայացնել բոլոր հանցագործներին վերաբերող գործերը՝ հեռագրեր, ծածկագրեր, իրադրություններից ստացված կարգադրությունները և կենդանի անձանց վկայությունները, նրանց թալանի, խժոժությունների, չարաշահումների վերաբերյալ: Հարցաքննությունների համար պիտի ներկայանային Ատյանին՝ Թալեթից սկսած մինչև ամենաստորին պաշտոնյաները: Սակայն գլխավոր հանցագործներն արդեն ճողոպրել կամ թաքնվել էին: Բայց, այնուամենայնիվ, հարյուրից ավելի չարագործներ բերվեցին քննության:

Ապացուցված համարելով առաջին հարցաքննվողների մեղքը հայոց ջարդեր կազմակերպելու, խժոժությունների ու թալանի մեջ՝ ոմանց կախաղանի, ոմանց թիապարտության դատապարտեցին և առաջին 11 հոգուն կախաղան բարձրացրին:

Եվ հանկարծ անգլիացիներն ընդհատեցին հանցագործներին հարցաքննելն այն պատճառաբանությամբ, թե մնացյալ հանցագործներին տեղափոխում են Մալթա կղզի, որտեղ գերի ընկած 8 կամ 10 զինվոր կար՝ նրանց հետ մոտ 100 հանցագործի փոխանակելու համար: Այս ծիծաղելի պատրվակը հորինվեց անգլիացիների ստացած շատ մեծ կաշառքի դիմաց: Կարծես թե դժվար էր Մալթայից 8-10 գերի զինվորների բերել Ստամբուլ և ոչ թե ամբողջ Ատյանի կազմը, 90 հանցագործներին իրենց վերաբերող բազմաթիվ փաստաթղթերի հետ:

Դե անգլիացիները թուրքերից կաշառք վերցնելու մեջ հմտացել են դեռևս 1878 թ.-ից, երբ Կիպրոսը վերցրին Հայկական հարցը խափանելու դիմաց (հիշենք, որ այս կաշառքի մասին խոստովանել է ինքը՝ Լյուի Ջորջը, իր «Խաղաղության պայմանագրերի ճշմարտությունը» գրքում):

Այսպես խափանվեց նաև հանցագործներին պատժելու նպատակով ստեղծված պատերազմական Արտակարգ ատյանի գործունեությունը:

Ի՞նչ էր մնում հայերին անել՝ իրականացնել հեռակա կարգով մահվան դատապարտվածների մահապատիժը:

Դա մի հսկայական աշխատանք էր վրիժառուներ մարզելու ու թաքնված իրադրություններին հայտնաբերելու և մահավճիռն իրականացնելու տեսանկյունից:

Հայերը ստեղծեցին գաղտնի մի կազմակերպություն՝ անվանելով այն Նեմեսիս: Այս անունը վերցված է հունա-

կան դիցարանից. Nemesis էր կոչվում վրիժառության աստվածուհին: Վրիժառուներ շատ կային. բոլոր հայերն էլ ունեին զոհված հարազատներ: Սակայն վրիժառուն պիտի լիներ անվրեպ, որպեսզի սխալվելու դեպքում ինքն էլ չդառնար զոհ:

Ընտրվեց երկու վրիժառու՝ երկանյանն ու Շիրակյանը:

Բայց միայն նշանառուներով գործը չէր կատարվի, եթե չլինեին հանցագործներին հայտնաբերող, նրանց հարմար վայրերում և հարմար ժամին հետախուզող անձինք: Ահա նման հետախուզի դերը հանձն առավ Կարապետը, որ գերազանց գիտեր թուրքերեն:

Մեզ մոտ սովորություն է դարձել նշել վրիժառուներից միայն նրանց անունները, ովքեր սպանել են մեր ազգի արմենոցիդի կազմակերպիչներին՝ միշտ մոռացության տալով այն անձանց անունները, ովքեր ամիսներով հերթապահել են այդ հրեշների թաքստոցների մոտ և որոշել նրանց գնդակահարելու պահը: Ահա այդպիսի հերոսներից մեկն է Կարապետը:

Ո՞վ էր Կարապետը կամ Հրաչը: Նա ծնվել է 1892 թ. Յոզդաբուն, ապրել է Սեբաստիայում: 1914 թվականին ավարտել է Կոստանդնուպոլսի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Նույն թվականին ընդունվել է սպայական ուսումնարան:

1918-ին նա արդեն սպայական կոչում ուներ: Խուսափելու համար զինվորական ծառայությունից՝ մի թուրք սպայի անձնագրով մեկնում է Հալեպ և «ամիստանում»: 1919-ին նա վերադառնում է Պոլիս և տեղեկանում Հայ հեղափոխական դաշնակցության ծրագրած «Նեմեսիս» գաղտնի օպերացիայի մասին:

Ինչպես վերն ասացինք, օտար երկրներում թաքնվող, անունները և հաճախ արտաքինը փոխած թուրք ոճրագործներին նախ գտնել էր պետք և տեղեկացնել մահապատիժի իրագործող հայ վրիժառուներին:

Հրաչ Փափագյանը (կամ Կարապետ) հանձն է առնում մեկնել Բեռլին, փնտրել և գտնել չարագործներին: Նեմեսիսի ղեկավարներին հայտնի էր արդեն, որ Բեռլինում են թաքնվում Թալեթը, Բեհաեդդին Շաքիրը, Ջենալ Ազմին, Սայիդ Հալիմ փաշան, Նազիմ Ջուլիդը և այլք: Ստանալով ընկերների համաձայնությունը՝ զգուշության համար որոշում է թլփատվել և թուրքի անձնագրով մեկնում է Բեռլին՝ որպես Մեհմեդ Ալի. ըստ հորինված կենսագրության՝ նա ծանր հիվանդ էր. պետք է ախտորոշվեր և բուժվեր: Բայց քանի որ գերմաներեն լավ չգիտեր, վաթանդաշների (հայրենակիցների) օգնության կարիքն ուներ:



Շուտով Բեռլինում նա գտնում է Ազմինի պատկանող ծխախոտի խանութը, որտեղ տիրություն էր անում նրա ավագ որդին: Հրաչը ներկայանում է որպես մեծահարուստ թուրք, որ Բեռլին է եկել բուժվելու համար: Եվ քանի որ լեզու չգիտի, խնդրում է իրեն օգնել: Նրանք մտերմանում են:

Օրերից մի օր քիչ էր մնում նա մերկացվեր որպես հայ: Ազմինի տղայի հետ նրանք սուրճ էին խմում խանութում, երբ ներս մտավ Հրաչի՝ Ստամբուլի դասընկեր մի թուրք: Բնականաբար, թուրքը մատնել էր նրա հայ լինելը: Ազմինի տղային համոզելու համար Հրաչը նրան հրավիրում է բաղնիք և որպես ապացույց ներկայացնում իր թլփատությունը: Նրանց մտերմությունը շարունակվում է: Մի անգամ Ազմինի տղան ներողություն է խնդրում Հրաչից, որ խանութը շուտ է փակելու, որովհետև իրենց տանը մեծ խնջույք է լինելու, որը կշարունակվի ամբողջ գիշերը...

Հաջորդ առավոտվա լուսաբացին Ազմինի տուն են մտնում վրիժառուներ Շիրակյանը և Երկանյանը ու գնդակահարում են ոճրագործներ Ջենալ Ազմին և Բեհաեդդին Շաքիրին: Փափագյան Հրաչի հետագա ճակատագիրը մեզ անհայտ է...

Ներսես ՄԿՐՏՉՅԱՆ  
Բանասիրության դոկտոր



## Մենք նրան հիշում ենք կարոտով

Արդեն 1 տարի է, ինչ մեզ հետ չէ ԶԱԱ կադրերի երկարամյա բաժնի պետ Մեդրա Բաբկենի Գալստյանը: Նա կյանքից հեռացավ 2020 թվականի հունվարի 26-ին 76 տարեկան հասակում:

Հարուստ և մասնագիտական ձեռքբերումներով լի կենսագրություն ուներ Մեդրա Գալստյանը: Նա իր կյանքի 50 տարին նվիրել էր ՀՀ ԳԱԱ-ին: 1969 թվականին ընդունվելով ՀԱՍՀ գիտությունների ակադեմիայի կադրերի բաժնի տեսուչ, երկարամյա և մասնագիտական ունակությունների շնորհիվ 1995 թվականին նշանակվում է նույն բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնում, իսկ 1998 թվականից մինչև կյանքի վերջին օրը եղել է ՀՀ ԳԱԱ կադրերի բաժնի պետ:

Մեդրա Գալստյանն աչքի էր ընկնում աշխատասիրությամբ, նվիրվածությամբ, բարեսիրությամբ, զարմանալի բարեկրթությամբ և իրեն բնորոշ լավատեսությամբ:

Նա մեծ հարգանք ու սեր էր վայելում ոչ միայն մախագահության, այլև ակադեմիական համակարգի բոլոր աշխատողների կողմից:

Մեդրա Գալստյանի հիշատակը միշտ վառ կմնա ՀՀ ԳԱԱ աշխատակիցների և նրան ճանաչողների սրտերում:

Ստոկհոլմում Հայաստանի դեսպանատան ջանքերով լույս է տեսել հայկական պատմվածքների մի ընդարձակ ժողովածու՝ «Բաց երկնքի տակ հին լեռներ» վերնագրով («Թրանս» հրատարակչություն): Այն ընդգրկում է ստեղծագործություններ 20-21-րդ դարերի հայ 26 արձակագիրներից (Աղասի Այվազյան, Ջորայր Խալափյան, Հրանտ Մաթևոսյան, Ռուբեն Հովսեփյան, Վահագն Գրիգորյան, Անահիտ Թովմյան, Ալիսա Հովհաննիսյան, Վրեժ Իսրայելյան, Գուրգեն Խանջյան, Լևոն Ջավախյան, Արա Նազարեթյան,

Արմեն Շեկոյան, Լևոն Խեչոյան, Հրաչ Բեգլարյան, Կարինե Խողիկյան, Վազգեն Սարգսյան, Նարինե Կրոյան, Հովհաննես Երանյան, Սուսաննա Հարությունյան, Հրաչյա Սարիբեկյան, Անուշ Ասլիբեկյան, Արամ Պաշյան, Համբարձում Համբարձումյան, Լևոն Շահմուր, Գրիգ, Վանո Սիրադեղյան):

Նշենք, որ սա շվեդերենով հայկական պատմվածքների երկրորդ ժողովածուն է: Առաջինը և մինչ այս հատորի հրատարակվելը՝ միակը, լույս էր տեսել 1968-ին շվեդ թարգմանիչ Կառլ Էլոֆ Սվեննինգի

մախածեռնությամբ, սակայն թարգմանությունները կատարվել էին ֆրանսերենից և ռուսերենից: Ներկա հատորում բոլոր թարգմանությունները հայերենից կատարել են Շվեդիայում բնակվող թարգմանչուհի, Երևանի պետական համալսարանում ուսանած Լուսյա Աղամյանը և Մարիան Վալենսիսը: Գրքի առաջաբանը գրել է Շվեդիայի թագավորությունում Հայաստանի նախկին դեսպան Արտակ Ապիտոնյանը, նաև ընդգրկված է գրականագետ Վահրամ Դանիելյանի նախաբանը:

Ա. Բ.

## Հաստատվել է Տիրոջ դագաղի ծագումը

Հնագետները հաստատել են ծագումը Տիրոջ դագաղի, որում, ըստ առասպելի, խաչվելուց հետո թաղվել է Հիսուս Քրիստոսը: Տիրոջ դագաղը է The Independent հրատարակչությունը:

Հնագետ Ֆրեդերիկ Խիբերթը հաստատում է, որ դամբարանի բովանդակությունը «լիովին ապացուցում է, որ Քրիստոսի ժամանակակից երկրպագուները խոնարհվում են հիրավի այն դամբարանի վրա, որը Հռոմի կայսր Կոնստանտին 1-ը, ավելի ստույգ՝ նրա մայր Էլենան գտել է IV դարում»: Ասում են, որ Երուսաղեմ աղոթելու եկած Էլենան գտել է Տիրոջ դամբարանը, կենսածոն խաչը և քրիստոնեական հավատքի այլ մասունքներ:

Հիշեցնենք, որ Տիրոջ դամբարանի Տաճարը քրիստոնեության սրբություն սրբոցն է: 1852 թվականին 6 հավատքի ներկայացուցիչներ՝ ուղղափառներ, կաթոլիկներ, սիրիացիներ, հայեր, դպիրներ

և հաբեշներ, վերջապես միմյանց մեջ բաժանեցին Տաճարի յուրաքանչյուր սանտիմետրը և այդ ժամանակներից պահպանում են ստատուս քվոն: Հրեշտակի ժամատան պատերում բացված երկու պատուհանները կոչված են Մեծ շաբաթի օրը հույս փոխանցելու Սրբազան Կրակը: Հարավային պատուհանը ուղղափառների համար է, հյուսիսայինը՝ հայերի:

Այն բանից հետո, երբ հնագետները բարձրացրին դագաղը ծածկող ծերմակ մարմարը, նրանք հայտնաբերեցին կավճից պատրաստված մի դարակ, որի վրա, հավանաբար, պատկերված է եղել Հիսուս Քրիստոսի մարմինը: Հնագետները դամբարանում գտան մարմարի երկրորդ տախտակը, որը մինչ այդ անհայտ էր հետազոտողների համար: Հնագետները, կարծում են, որ մարմարյա տախտակի վրա XII դարում խաչակիրները խաչ են փորագրել:

Հնագետների հայտնաբերած մարմարյա տախտակը մոխրագույն էր և ոչ թե դեղնասպիտակ և թաքնված էր փոշու հաստ շերտի տակ:

Հենց այդ մոխրագույն մարմարյա տախտակի հայտնաբերումը կարող է ապացույց լինել այն հանգամանքի, որ հետազոտվող դամբարանը հենց այն է, ինչ IV դարում հայտնաբերեց Հռոմի կայսր Կոնստանտին 1-ի մայր Էլենան:

Տիրոջ դագաղը թաղված է դեղնավարդագույն մարմարյա զմբեթով ժամատան խորանում, այն վերականգնվել է 1809-1810 թվականներին՝ հույն ճարտարապետ Նիկոլա Կոմինի նախագծով:

Գիտնականների կարծիքով դամբարանի բացումը կօգնի հնագետներին պարզելու, թե ինչու Երուսաղեմում պեղումներ իրականացնող Սուրբ Էլենան որոշել է, որ սույն դամբարանը այն սրբատեղն է, որտեղ թաղվել է Հիսուս Քրիստոսը:

## ՀԵՏԱԳՐՔԻՐ ՓԱՍՏԵՐ

### Ինչու՞ է երկինքը կապույտ, ինչպե՞ս է սկիզբ առել աշխարհը կամ ինչո՞ւ են ծառերը փոխում իրենց երանգները

Այս ու մասնատիպ շատ հարցեր տանջում են մեզ, երբ դեռ երեխա էինք, և մեզ թվում էր՝ սրանց պատասխանել ուղղակի անհնար է: Այն, որ հիմա արդեն մեծ եք, դա չի նշանակում, որ դուք կորցրել եք ձեր հետաքրքրությունն աշխարհի հանդեպ: Եվ այսպես, եթե դուք պատրաստ եք ստանալու ձեզ հուզող բոլոր հարցերի պատասխանները, ապա ամենայն ուշադրությամբ հետևեք, որպեսզի ձեր ուղեղն ընկալի այս բոլոր տեղեկությունները:

#### Ինչո՞ւ եք փշաքաղվում

Փշաքաղվելու փաստը պայմանական բնույթ ունի, օրինակ՝ որոշ կենդանիների սա օգնում է ավելի արագ տաքանալ՝ յուրաքանչյուր մազ արմատապես առանձին-առանձին մեկուսացնելով: Վտանգի առկայության դեպքում այն պաշտպանողական բնույթ ունի, փշաքաղվելու արդյունքում կենդանիներն ավելի մեծ են թվում, այս կերպ վախ ներշնչելով թշնամուն: Իհարկե, մարդն էլ թշնամուց պաշտպանվելու համար չէ, որ փշաքաղվում է, բայց այն, որ սարսափից այլ հուզական որոշակի վիճակից փշաքաղվում է, ինչու չէ նաև տաքացնում մարմինը, դա անհերքելի փաստ է: Եվ սա տեղի է ունենում մեր օրգանիզմում առկա արդենալինի հետևանքով, որը դարձնում է մեր ուղեկցում է համայն մարդկությանը:

### Ինչո՞ւ է արևը մազերի գույնը դարձնում ավելի բաց, իսկ մաշկի գույնը՝ մուգ

Երկու դեպքում էլ արևի ուլտրամանուշակագույն ճառագայթները մեկանիմեն փոխանցում մեր օրգանիզմին, սակայն հաշվի առնելով այն փաստը, որ մեր մաշկի վրա գտնվող բջիջները ողջ են, իսկ մազերինը՝ մահացած, հետևաբար՝ մեկանիմեն մի դեպքում մի ֆունկցիա է կատարում, մյուսում՝ հակառակը:

### Ինչո՞ւ Ձեր ձայնն այլ կերպ է հնչում ձայնագրություններում

Դուք երբեք լսել եք ձեր ձայնը ձայնագրությամբ, ճանաչել եք գոնե, որ դա հենց ձեր ձայնն է: Ինչպե՞ս է ընդհանրապես կատարվում լսողական գործընթացը:

Ուրիշների ձայնը մեզ է հասնում՝ հարաբերակցվելով միայն օդի հետ, իսկ արդեն ինքներս մեզ լսելու երևույթը մի քիչ այլ է, քանի որ այստեղ երկու գործոն է միջամտում: Այսինքն՝ մենք միանգամից երկու ձայն

ենք լսում, մեկը այն ձայնը, որը հարաբերակցվում է օդի հետ, և որը լսում են մեր դիմակները: Այսինքն՝ սա մեր իսկական ձայնն է, և մյուսը, որի ցածր հաճախականությունն անցնում է մեր լսողական ընկալիչներով և մեր զանգի ամեն մի ոսկորի հետ հարաբերակցվելով՝ այլ կերպ է հնչում: Ահա թե ինչու ենք մենք անակնկալի գալիս, երբ լսում ենք մեր ձայնը՝ հաճախ չճանաչելով այն:

### Ինչո՞ւ է սառչում ձեր ուղեղը սառը ուտեստ կամ խմիչք օգտագործելիս

Բոլորիդ էլ քաջ ծանոթ է այն զգացողությունը, երբ սառը պաղպաղակ կամ խմիչք եք համտեսել, ասես սառնաշունչ եղանակին դուրս գաք վազելու, գիտե՞ք, թե դա ինչից է: Երբ սառը ինչ-որ բան դիպչում է ձեր բերանի վերևի մասում տեղակայված նյարդային կենտրոնին, այն շատ ուժեղ է արձագանքում է, և փորձելով տաքացնել ուղեղը՝ գլխուղեղի արյունատար անոթները սկսում են լցվել, բարեբախտաբար սա տևում է մոտավորապես 30 վայրկյան:

### Ինչո՞ւ է երեխաների համար ժամանակն ավելի դանդաղ անցնում

Երբ դուք դեռ երեխա էիք, դուք ստիպված էիք ահազին իրողություններ մտապահել:

Երեխաները մոր-մոր են սկսում ծանոթանալ շրջակա միջավայրին, և նրանցից ավելի շատ ջանք է պահանջվում՝ հնարավորինս շատ տեղեկություններ ընկալելու համար: Ավելի մեծ տարիքում ինչ-որ խնդիրների առնչվելիս մենք օգտվում ենք նախորդ դեպքերից վերցրած փորձից՝ այն լուծելու համար, սակայն երեխաները չունեն այս փորձը, ուստի նրանց ավելի շատ ինֆորմացիա է անհրաժեշտ՝ զննելու և համեմատելու յուրաքանչյուր իրողություն:

### Ինչո՞ւ եք փակում աչքերը, երբ փռչում եք

Գիտնականներն այնքան էլ վստահ չեն, բայց, ըստ մի վարկածի, այն կատարվում է պայմանական ռեֆլեքսի թելադրանքով, այսինքն՝ աչքերը փակվում են, որպեսզի փռչում ժամանակ բերանից և քթից դուրս թռած բակտերիաները չընկնեն աչքերի մեջ: Մեկ այլ վարկած բացատրում է, որ փռչում ընթացքում դեմքի բոլոր մկանները կրճատվում են, ըստ այդմ էլ աչքերն ակամա փակվում են:

## ԺՈՒՏՆԵՐ



Մեքսիկացի միլիոնատեր Լուկրի դահլիճներից մեկում երկար նայում էր, թե ինչպես է նկարիչը պատճենում ֆլամանդական վարպետի նկարներից մեկը:

- Ներեցեք, խնդրեմ, երբ մորը պատրաստ կլինի, ի՞նչ եք անելու հին նկարը, - հետաքրքրվեց միլիոնատերը:



- Ինչ հիմար էի ես, որ ամուսնացա քեզ հետ:  
- Կարող եմ բաժանվել:  
- Եղ մեկը կներես, ես կատարյալ հիմա՞ր եմ, ի՞նչ է...



Հոգեբույժը այցելուին.  
- Ուրեմն, երբ պատրաստվում եք քնելու, մնջարանի դռնից այն կողմ թողեք բոլոր անախորժ բաները:  
- Բա ոնց չէ: Եվ Դուք կարծում եք, թե կինս կհամաձայնվի՞ մենակ քնել հյուրասենյակում:



- Որտեղի՞ց ես գնել այդ պտուտակահանները:  
- Չգիտեմ, չեմ հիշում, բայց հաստատ գիտեմ, որ դրանք չինական են և պատրաստված են հատուկ ստվարաթղթից և փայլաթիթեղի համաձուլվածքից:



Հայտարարություն ինքնաթիռի ուղևորների համար.  
- Հարգելի ուղևորներ, խնդրում ենք անջատել բջջային հեռախոսները, համակարգիչները և բոլոր այն սարքերը, որոնք կարող են խաթարել օդանավի հրամանատարի կարգիտսիմուլյատորի աշխատանքը:



- Տղա՛ս, դու ամբողջ թխվածքը կերար, և մտքովդ էլ չանցավ, որ փոքրիկ քույրիկ ունես:  
- Ի՞նչ ես ասում, մա, ընդհակառակը, ուտելիս ես հենց միայն նրա մասին էի մտածում: Վախենում էի՝ շուտ կգա, և ես չեմ հասցնի ուտել ամբողջը:

## Գիտություն

### Գլխավոր խմբագիր՝ Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղդամյան 24բ, հեռ. 56-80-14, 077 31 63 76  
Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:  
Ստորագրված է տպագրության՝ 28.01.2021 թ.:  
"ГИТУТЮН" ("Найка") газета НАН РА